ՊԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

ՀԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Դատական դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ՝ ի պատասխան 2022 թվականի հունվարի 26-ի թիվ Մ-1432 գրության Ձեզ եմ ուղարկում ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից իրականացվող 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի մշակման աշխատանքների համար անհրաժեշտ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն.

1. Պետության կարիքների համար ծրագրային ապահովման ապահովման ծառայությունների («Դատական համակարգ» համակարգչային ծրագրի (CAST) սպասարկման ծառայություններ) մատուցման գումարը 2023-2025թթ.-ի համար կկազմի տարեկան 50.000.000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱՀՀ-ն: Գինը ճշտվել է բանավոր հարցմամբ:

2. Պետության կարիքների համար ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների ձեռքբերման մատուցման պետական գնման N ԴԴ-ԷԱՇՁԲՔ-21/03-1 պայմանագրի (27.10.2021թ.) համաձայն ծառայության տրամադրման գումարը կազմում է 9.036.600 (ինը միլիոն երեսունվեց հազար վեց հարյուր դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱՀՀ-ն: Պայմանագիրը կնքվել է 2022 և 2023թ.-ի համար:

3. Պետության կարիքների համար ծրագրային ապահովման ապահովման ծառայությունների (Mulberry Groupware 2.0 էլեկտրոնային փաստաթղթաշրջրջի համակարգի սպասարկման ծառայություններ՝ մինչև 1500 օգտվողի համար) մատուցման գումարը 2023-2025թ.-ի համար կկազմի ամսեկան 432000 ՀՀ դրամ ներառյալ ԱՀՀ-ն, (կատարվել է գնային հարցում):

4. Պետության կարիքների համար էլեկտրոնային փոստի ծառայությունների մատուցման գումարը 2023-2025թ.-ի համար կկազմի ամսեկան 60000 ՀՀ դրամ ներառյալ ԱՀՀ-ն, (կատարվել է գնային հարցում):

5. ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի համար (www.court.am) Positive SSL սերտիֆիկատի ձեռքբերումը մեկ տարի ժամկետով կկազմի 10000 ՀՀ դրամ: Գինը հաստատված վճարված անդորրագրի: